Արձանագրություն N 2

<< ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19.04.2017թ
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Գ. Գևորգյան /գնահատող/
Կ. Բայբուրտյան/ բացող /
Ա. Գրիգորյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. << ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	<<Հուսալի Կամար>> ՍՊԸ
2	<<Մառք>> ՍՊԸ
3	<<Արման- Թաման>> ՍՊԸ
4	<<Բագարանի բարիք>> ՓԲԸ
5	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ
6	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով գնման ընթացակարգի բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների			
Մասնակիցների անվանումը	Առաջարկած գինը		
	Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
<<Հուսալի Կամար>> ՍՊԸ	100 000	20 000	120 000
<<Մառք>> ՍՊԸ	395 000	-	395 000
<<Արման- Թաման>> ՍՊԸ	1 100 000	-	1 100 000
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ	1 250 000	250 000	1 500 000
<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	1 500 000	-	1 500 000
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	2 000 000	400 000	2 400 000

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

2.3 Գնման ընթացակարգի նախահաշվային գինը՝ 3 393 200 (երեք միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2.4 Պարզեցված ընթացակարգին հայտ ներկայացրած <<ՄԱՌՔ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը ստորագրված չէ գլխավոր հաշվապահի կողմից և բացակայում է գլխավոր հաշվապահ չունենալու մասին տեղեկանքը:

2.5 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ծանուցել 2.4 կետում նշված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի սույն նիստն ընդհատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

6.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի ապրիլի 25-ին ժամը 12:00-ին ՀՀ Քաղաքաշինության նախարարությունում ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Ջանջուղազյան
Անդամ՝		Ռ. Եղիազարյան
		Գ. Գևորգյան
		Կ. Բայբուրտյան
		Ա. Գրիգորյան
Քարտուղար		Տ. Վասիլյան